ՀՀ ԿԳՄՆ «ԱՐՄԱՎԻՐԻ Ռ. ԵՂՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ /ՎԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈԴԻ ՄԻՋՈՑՈՎ

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ ԱՐՄԱՎԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝
ՀԱՄՄԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԹԱՄԱՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԴՊՐՈՑ՝
<<ՄՐԳԱՇԱՏԻ Մ.ՄԱՂԱՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ՊՐՈՑ>>ՊՈԱԿ

2022_2023ուստարի

Բովանդակություն

1.Նախաբան_____3

2.Գրական ակնարկ_____5

3.Գործնական համատեքստ_____9

3.1.Խմբի նկարագիրը_____8

3.2.Փորձարարական դասեր_____10

3.3.Փորձարարական դասեր_____9

3.3.1.Փորձարարական դաս-1_____11

3.3.2.Փորձարարական դաս-2_____12

4.Վերլուծություն Եզրակացություն_13-14

6.Գրականության ցանկ_____15

7.Հավելված_____16

1.Դասապլան-16____19

2.Դասապլան-20____23

1.Նախաբան

Տարբեր ժամանակաշրջաններում կրթության բովանդակությունը, ուսուցման մեթոդները, ուսուցման կազմակերպման ձևերը փոխվել են՝ ելնելով տվյալ հասարակության՝ դպրոցին ներկայացված պահանջներից: Մեր օրերում դրանք նույնպես փոփոխվում են, կատարելագործվում՝ հաշվի առնելով հասարակության նոր պահանջներն ու գիտատեխնիկական առաջընթացի ու գիտությունների զարգացման միտումները: (Յու. Ամիրջանյան):

Մանկավարժական տարբեր խնդիրներ լուծելու համար անհրաժեշտ է ուսումնառության գործընթացը ենթարկել փոփոխությունների սովորողի պահանջներից կախված՝ կիրառելով տարբեր մեթոդներ ու միջոցներ: Այսօրվա

դպրոցի առաքելություններից մեկն էլ քննադատաբար մտածող սերնդի ձևավորումն է: Աշակերտին պետք է սովորեցնել քննադատաբար մտածել, երբ աշակերտը նոր ինֆորմացիայի է բախվում, պետք է կարողանա այն մտածված, քննադատաբար վերլուծել (Վ.Խրլոբեան): Քննադատական մտածողությունը խիստ արդյունավետ ձև է դասը ճիշտ պլանավորելու և արդյունավետ իրականացնելու համար: Այս համակարգի կիրառումը հնարավորություն է ընձեռում իրականացնելու ուսումնական տարբեր

գործողություններ, որոնք էլ իրենց հերթին օգնում են ուսուցչին ուղղորդելու սովորողին. ակտիվացնելու նրանց մտածողությունը, արդյունավետ քննարկումներ ծավալելու (Ն. Տողանյան, Հ. Խաչատրյան): Գրեթե բոլոր ականավոր հեղինակները համակարծիք են, որ քննադատական

մտածողության ձևավորմանը միանշանակ նպաստում է դասավանդման ինտերակտիվ մեթոդների կիրառումը (Ա. Անափիոսյան): Եվ վերջին հաշվով աշակերտների քննադատական մտածողության զարգացումը մեծապես կախված է սովորողների՝ ուսուցման գործընթացի ակտիվ մասնակից լինելուց, ուսուցչի մեթոդի ընտրությունից, ճիշտ հարցադրումներ անելուց: Այդպես պետք է վարվել քննադատսկան մտածողության զարգացման

գործընթացում: Կարևորելով «Գրականություն» առարկայի իմացությունը `որպես հետազոտության թեմա ընտրել եմ
հարցադրումների մեթոդը,որի իրագործումը արդիական է և ժամանակակից մանկավարժության պահանջներին համապատասխան:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ որոշեցի լուծել իմ առջև դրված հետևյալ խնդիրը.

Ինչպիսի՞ն է հարցադրումների մեթոդի արդյունավետությունը քննադատական մտածողության զարգացման գործընթացում:

Այդ խնդրի լուծման ընթացքում փորձել եմ տեսնել.

- Գրանցվեցի՞ն արդյոք հաջողություններ հետազոտական դասաժամերին
- Ինչպիսի՞ անդրադարձ կատարվեց աշակերտների կողմից
- Բարձրացա՞վ արդյոք «Գրականություն» առարկայի հանդեպ աշակերտների հետաքրքրությունը
- Ձեռք բերվեցի՞ն հմտություններ դասի յուրացման փուլում
- Հենվելով սեփական գիտելիքների վրա՝ կարողացա՞ն ձեռք բերել նոր գիտելիքներ:

Հարցադրումը ունի ուղղորդող բնույթ, որը կարելի է կիրառել դասի ցանկացած փուլում, քանի որ այն կարող է մոտիվացնել աշակերտներին և միաժանակ դառնալ գործիք՝ աշակերտների ուսումնառությունը հաջող իրագործելու ընթացքում:Ինձ համար կարևոր է ընտրել այնպիսի ռազմավարություն, որը աշակերտին կմղի մտածել, վստահել սեփական ուժերին և կբարձրացնի գրականության հանդեպ հետաքրքրությունների շրջանակը, կգիտակցի «Գրականություն» առարկայի նշանակությունը, կարևորությունը և ուսուցման նպատակը:

Հիմնական դպրոցում գրականաության ուսուցման նպատակներից են.

- գրքի և ընթերցանության հանդեպ հետաքրքրության դրսևորումը
- տեքստի գլխավոր գաղափարի բացահայտումը
- սեփական տեսակետի փաստերով հիմնավորումը, մեկնաբանումը, իր և ուրիշների կարծիքների ու փաստարկների գնահատումը
- պատճառահետևանքային կապերի վերլուծումը, որոշումներ կայացնելը

Հարցադրումները պետք է տրվեն դասի բնույթից , տիպից և կառուցվածքից, ունենան նպատակ , իրականանան որոշակի սկզբունքով՝ զարգացնելով աշակերտների քննադատական մտածողությունը:

Քննադատական մտածողության զարգացման նպատակներից է

հարցադրումների մեթոդով աշակերտների արժեքային համակարգի բարձրացումը :Հարցադրումների մեթոդը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել, թե հարցերի միջոցով ինչ մակարդակներ ենք չափում:

Ըստ իս, վերջինը առիթ դարձավ, որ իմ դասաժամերին կիրառեմ հարցադրումների մեթոդը՝ գրավոր և բանավոր՝ կառուցողական հետադարձ կապով, քանի որ այն, ինչ պարզ է լավ սովորող աշակերտների համար, պարզ չէ միջին և ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների համար: Հարցադրումներ կատարելիս պետք է ուշադրությունը բաշխել ողջ դասարանին՝
հաշվի առնելով թյուրըմբռնող աշակերտներին: Դասարանում ներգրավվածություն ապահովելու համար թյուրըմբռնող աշակերտների համար անհրաժեշտ է խմբային, զույգերով կամ քարտային աշխատանքներում պարզ կամ հեշտ հարցեր կազմել, քննարկումների ժամանակ դա հնարավորություն է տալիս աշակերտներին միմյանց հետ շփվելու, մտքեր փոխանակելու, քննարկումներ կատարելու համար:

Քննադատական մտածողության եղանակները.

Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը և արդիականացումը հիմք է հանդիսանում կրթության որակի բարելավման:Հարցերի կիրառությունը դասավանդման գործընթացում ամենահզոր գործիքներից մեկն է,դրանց ճիշտ կիրառությունը զգալիորեն կարող է բարձրացնել ուսման որակը, և ավելացնել սովորողների ներգրավվածության մակարդակը:Ըստ Քրիսթին Չինի՝ իրական ուսուցում ապահովելու համար պետք է օգտագործել մարդու միտքը և ոչ թե հիշողությունը, իսկ հարցեր տալու և հարցերին պատասխանելու կարողությունը առանցքային է:

Քննադատական մտածողության նպատակները.

Հարցադրումների մեթոդի միջոցով քննադատական մտածողության զարգացման նպատակն է ներկայացնել հարցադրումների այն ռազմավարությունները, որոնք կիրառվում են սովորողների գիտելիքները գնահատելու, ուսուցանվող նյութն ավելի խորն ըմբռնելու, քննադատական մտածողություն զարգացնելու, աշակերտների ներգրավվածության աստիճանը բարձրացնելու մոտիվացիան խթանելու համար:

Քննադատական մտածողության զարգացման ժամանակ ուսուցչի դերը.

Դասերի ընթացքում անհրաժեշտ է կիրառել մոտեցումներ, որոնք օգնում են «ջերմացնել» այսպես կոչված «սառը» ռազմավարությունը: Ստորև ներկայացնենք դրանցից հիմնականները.

- Նախապես զգուշացնել աշակերտներին, որ մեծապես խրախուսվում է դասին մասնակցությունը:
- Աշակերտներին տալ ժամանակ, որ նրանք պատրաստեն իրենց հարցերը, ինչպես նաև անդրադարձ կատարեն հետաքրքրող հարցերին:
- Հմտորեն կառավարել ողջ պրոցեսը և աջակցել աշակերտներին, որ նրանցից յուրաքանչյուրն իր հնարավորության չափով ներգրավվի դասին:
- Օգտագործել բաց հարցեր և օգնել աշակերտին հանգել ճիշտ պատասխանի:
- Ստեղծել հոգեբանական ապահով միջավայր:

Քննադատական մտածողության զարգացման դրական և բացասական կողմերը.

Քննադատական մտածողությունը, հիմնված հարցադրումների մեթոդի վրա, ունի իր դրական և բացասական ազդեցությունը սովորողների վրա: Գրականության մեջ հարցադրուների կիրառումը դասավանդման գործընթացի կարևոր և բաղկացուցիչ մասն է կազմում: Հարցադրումների կիրառմամբ բարձրացվում է աշակերտների ոչ միայն վերլուծական, այլև քննադատական մտածելակերպը, ուսուցումը արդյունավետ է, երբ հարցադրումների ռազմավարությունը ճիշտ է ընտրված, ուսումնառությունը դառնում է ծանր պարտականություն, երբ չափից շատ հարցեր են օգտագործվում, որոնք էլ կարող են հանգեցնել բացասական արդյունքների և աշակերտների պասիվության:

Քննադատական մտածողության ռազմավարությունները.

Քննադատական մտածողության զարգացման ժամանակ կիրառվում են ամենատարածված հետևյալ ռազմավարությունները.

✔ խմբային և անհատական աշխատանքների արդյունավետ համադրումը

- ✔ խմբային աշխատանքի խրախուսումը
- ✔ մտքերի համակարգումը
- ✔ ճկունությունը
- ✔ հաստատակամությունը
- Պատրաստակամությունը
- գիտակցումը
- փոխզիջումային լուծումների որոնումը
- ինքնագնահատումը
- ուսուցչի մոդելը
- մետաճանաչողությունը

Այնուամենայնիվ, դա չի նշանակում, որ այդ հմտությունները բոլորի մոտ նույն չափով են զարգացած: Օրինակ՝ ուսուցիչը, մշտադիտարկման տակ

պահելով իր աշակերտներին, կարող է իր որևէ թույլ առաջադիմության տեր աշակերտի ընդգրկել բարձր առաջադիմություն ունեցող խմբում՝ թույլին հնարավորություն տալով պատասխանել բաց հարցերին, քանի որ բաց հարցերը մեծացնում են աշակերտների հետաքրքրությունը թեմայի նկատմամբ և կարող են մոտիվացնող նշանակություն ունենալ: Աշակերտը

միշտ չէ որ մտածում է կարևոր գաղափարների շուրջ, հետևաբար պետք է ստեղծել աջակցային և արդյունավետ միջավայր՝ աշակերտին քննարկումներին մասնակից դարձնելու համար, կառուցել համատեղ

գործունեություն սովորողների հետ, որպեսզի որոնումը և

ստեղծագործականությունը հնարավորություն տան բացահայտվելու

յուրաքանչյուր սովորողի: Բացահայտումները, որոնք կիրականացվեն դասի ընթացքում, կնպաստի նրանց ինքնուրույն մտածական գործունեության զարգացմանը:

Անհրաժեշտ է նշել, որ դասի նպատակների և ուսումնառության վերջնարդյունքների արժևորման դեպքում անհրաժեշտ է հստակեցնել գնահատման չափանիշները: Քննադատական մտածողության զարգացման գործընթացում կիրառվելու է ձևավորող գնահատում՝ գրավոր և բանավոր հետադարձ կապի միջոցով:

3.Գործնական համատեքստ

3.1.Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ Արմավիրի մարզի Մ.Մաղաքյանի անվան N 2 միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանում:Քանի որ այս դասարանում սովորողների ունակությունները տարբեր են, այդ իսկ պատճառով որոշեցի հետազոտական աշխատանքս կատարել հենց այս դասարանում:

Այս դասարանում սովորում են 33 աշակերտ՝ 19 աղջիկ և 14 տղա, որոնք ունեն տարբեր առաջադիմություններ, հետաքրքրություններ և հմտություններ: Գրականություն անցնում են շաբաթական 3 դասաժամ: Հետազոտական աշխատանք կատարելիս հիմնական շեշտը դրվեց աշակերտների ներգրավվածությանը դասապրոցեսի մեջ, քանի որ, երբ ստուգեցի աշակերտների ընթերցողական կարողությունների մակարդակը, արտաքին մասով խնդիր չունեցանք, բայց միջին և ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների մոտ տեքստի ըմբռնման և վերլուծելու մասով բավականին խնդիրներ ունեցանք, հետևաբար կկիրառենք վերոգրյալ ռազմավարությունները՝ վերջիններս տեղայնացնելով տեքստի շուրջ աշխատելու համատեքստում:

Ի դեպ. նշեմ նաև.որ այս նույն դասարանում ստանձնել եմ նաև ուսումնական նախագիծ, պարապմունքներն արդեն սկսել ենք. և այն ընթանում է շատ հետաքրքիր ու բուռն:

Անցնելով բուն թեմային՝նշեմ,որ այդ աշակերտների համար, որպես ներգործության միջոց, նախընտրեցինք կիրառել քննադատական մտածողությունը զարգացնող բաց հարցադրումների հետևյալ տեսակները՝

ո՞վ, Ի՞նչ , Ինչո՞ւ, Ի՞նչ հետևանքների է հանգեցնում, Ինչպե՞ս եք գնահատում…

Նախատեսել եմ անցկացնել հարցադրումների մեթոդի միջոցով դասեր , որոնք կարող են նյութի յուրացումը դարձնել գիտելիք, հմտություն և կարողություն, իսկ առարկայական ձեռքբերումները՝ քննադատական մտածողության զարգացման արգասիք:

Այսպիսով՝ հետազոտությանս թիրախը քննադատական մտածողության զարգացումն է խմբային կամ անհատական աշխատանքների միջոցով, հարց ու պատասխանի միջոցով:

3.2.Փորձարարական մաս

Իմ հետազոտության նպատակն է խմբային աշխատանքի օգնությամբ բարձրացնել քննադատական մտածողությունը՝ հարցադրումների մեթոդի կիրառմամբ՝ տրամադրելով գրավոր և բանավոր կառուցողական հետադարձ կապ:

Ինչու՞ որոշեցի հարցադրումների մեթոդի միջոցով զարգացնել քննադատական մտածողությունը դասարանի բոլոր աշակերտների համար.

քանի որ առաջին դասին անցկացրի անհատական վերլուծական աշխատանք տեքստի ըմբռնման շուրջ դասարանի բոլոր աշակերտների մասնակցությամբ: Լսելով բոլորի պատասխանները՝ ես հասկացա, որ աշակերտներից շատերը, չնայած ցուցաբերած բարձր առաջադիմության, ակտիվ մասնակիցներից վերածվեցին պասիվ ունկնդրողի:

3.Փորձարարական դասեր

3.3.1.Փորձարարական դաս -1

Դասի թեման է Դ. Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքը: Դասը սկսեցինք տանը նախապես կարդացած հատվածի և առաջադրանքների քննարկմամբ: Հարցադրումների միջոցով ամփոփվեց նախորդ դասերին սովորածը:

Այնուհետև խմբային աշխատանքի ձևաչափով բոլոր աշակերտներին ներգրավեցի կերպարների արարքների, շարժառիթների վերաբերյալ դատողություններ անելու, ընդ որում՝ հնչեցնելով հարցադրումներ: Հարցադրումներն սկսվեցին բաց հարցերով: Այսպիսով դասապրոցեսին ընդգրկեցի տարբեր կարողությունների տեր բոլոր աշակերտներին: Հետազոտվող աշակերտները, որոնք գտնվում էին իմ ուշադրության կենտրոնում , կարողացան կազմակերպել քննարկում՝ ճիշտ հարցադրումների միջոցով, յուրաքանչյուր աշակերտի մոտ բարձրացավ քննադատական

հետաքրքրությունը, խթանվեց միջին և ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների ակտիվությունը, իսկ բարձր առաջադիմություն ունեցող աշակերտների մոտ ավելացավ ինքնուրույնությունն ու քննադատական մտածողության մակարդակը: Բոլոր աշակերտներին ամբողջ դասաժամին տրվեց խրախուսանքով և մեկնաբանություններով գրավոր և բանավոր հետադարձ կապ:

3.3.2.Փորձարարական դաս-2

Այսօրվա դասի թեման է «Ամփոփիչ աշխ. և անդր. »՝ պատմվածքի գաղափարի, կերպարների, դիպաշարի բաղադրիչների մասին գիտելիքի ամփոփում: Դասաժամն սկսվեց տնային առաջադրանքի ստուգումով, բոլորը ներկայացրին իրենց տնային աշխատանքները, ինչին հաջորդեց նախորդ դասին կատարած քննադատական մտածողությունը զարգացնող

հարցադրումների պատասխանների քննարկումը: Սովորողները աշխատանքը կատարել էին շատ լավ, նույնիսկ բարձրացել էր ճանաչողական հետաքրքրությունների ու կարողությունների մակարդակը:Ես հասկացա, որ

հարցադրումների մեթոդը խմբային աշխատանքի ձևաչափով թույլ է տալիս լիարժեք զարգացնել քննադատական մտածողությունը:
Հարցադրումների մեթոդով սկսվեց դասը:Աշակերտները խմբային աշխատանքի ձևաչափով սկսեցին աշխատել ամփոփիչ աշխատանքի շուրջ /տե՛ս դասագիրք-2023, էջ 40.հեղինակներ՝ Ա. Նիկողոսյան, Ա. Վարդանյան / :
Պահանջն ընդգրկում էր նաև մենախոսություն՝ Հաճի աղայի և Սրբունի անունից, կարծիք,տեսակետ՝ մարդու իրավունքների պաշտպանի անունից,որոնցում լիարժեք դրսևորվելու էր ստեղծագործական և քննադատական մտածողություն,սեփական մտածելակերպի դրսևորում:
Քայլ առ քայլ իրագործեցինք ամփոփիչ նյութի կետերը՝ համաձայն Էդվարդ դե Բոնոյի ,, 6 գլխարկներ ,, մեթոդի:
Յուրաքանչյուր խումբ պատրաստեց խորհրդանշական գույնի գլխարկներ,պատկերազարդեց պաստառները՝
պահանջին համապատասխան:

Այնուհետև քննադատական մտածողությունը զարգացնող առաջադրանքներ տրվեցին՝ քարտերի վրա գրված հարցերի միջոցով:Դասարանի գրեթե բոլոր սովորողները

ակտիվացան ,ցուցաբերեցին խմբային /սոցիալական/ փոխըմբռնման գիտակցում, միմյանց լսելու .կարծիք հարգելու և այլ մոտեցումներ:

Այսպես նրանք կարողացան քննարկել և գրագետ շարադրանքով ներկայացնել խմբային աշխատանքը: Ինձ դուր եկավ աշակերտների ոգևորությունը խմբային քննարկումների ընթացքում, ինձ զարմացրեց նույնիսկ պասիվ աշակերտների խանդավառությունը, որոնք մի քանի դաս առաջ չէին մտածում սեփական հաջողություններ գրանցելու մասին: Դասն անցավ

և ես ինձ համար բացահայտեցի հարցադրումների մեթոդի հաջողությունները, որոնք կարող են արտահայտվել քննադատական մտածողության զարգացման, գիտելիքի, ընկալման, կիրառման, վերլուծելու, համադրելու և գնահատելու չափելիությամբ: Վերջնարդյունքները գնահատելու համար կատարեցի ձևավորող գնահատում՝ տալով գրավոր և բանավոր արդյունավետ հետադարձ կապ (բոլոր խմբերում 5-6 աշակերտ):

Վերլուծություն

Աշակերտների քննադատական մտածողությունը հարցադրումների մեթոդով զարգացնելու համար անցկացվեց 2 դաս, մասնակցեցին ուժեղ, միջին և թույլ կարողություններ ունեցող աշակերտներ: Յուրաքանչյուր դաս ինձ համար մի նոր բացահայտում էր: Հարցադրումների մեթոդը հնարավորություն տվեց

ամբողջ դասարանին ներգրավել դասապրոցեսին, ինչպես նաև հնարավորություն տվեց նույնիսկ ցածր կարողություն ունեցող աշակերտներին լիովին ներգրավել դասին:

Վերլուծելով 2 դասաժամերը՝ եկանք այն եզրակացության, որ հարցադրումների մեթոդը ուսուցման ինտերակտիվ մեթոդներից է, նպաստում է գրականության դասերին աշակերտների քննադատական մտածողության զարգացմանը, իրատեսական է այս մեթոդի կիրառումը, իսկ մեթոդի կիրառման արդյունավետությունը մեծապես կախված է նաև ուսուցչի վարպետությունից, ըստ այդմ տեղին է մեջբերել հետևյալ ասացվածքը և միշտ հետևել դրան.**«Ես**

լսում եմ և մոռանում,ես տեսնում եմ և հիշում,ես կատարում եմ և սովորում»:

Այսպիսով՝ հետազոտական դասաժամերը քննարկելիս բացահայտեցի

հարցադրումների մեթոդի արդյունավետությունը քննադատական մտածողության զարգացման համար՝ ապահովելով չափելի վերջնարդյունք, գրավոր և բանավոր կառուցողական հետադարձ կապ:

Եզրակացություն

Վերլուծելով երկու դասաժամերի արդյունքները՝ եկա այն եզրակացության, որ զարգացրել եմ քննադատական մտածողության զարգացման չափելի արդյունք, առաջադիմության աճ՝ սովորողների տարբեր իմացական մակարդակներում, որը պայմանավորված է հետևյալ գործոններով.

1.գրավոր և բանավոր հետադարձ կապի տրամադրում

2.հարցադրումներով արդյունավետ ուսուցում

3.թեմայի հիշեցում և ամփոփում՝ խմբային աշխատանքի ձևաչափով:

Գրականության ցանկ

1.https://drive.google.com/file/d/15-398WbbQmBUn566mwXWFt2thrDaH1RM/view?usp=drivesdk

2.Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս. «Մանկավարժություն» Մանկավարժ 2005

- **Վ. Խրլոբեան, Համահայկական կրթական աշխատաժողով -2022**

https://m.youtube.com/watch?v=vZLd9qstBo0

- **Ն. Տողանյան, Հ. Խաչատրյան,Գրականություն - 7, Մեթոդական ձեռնարկ.,- Եր., 2008**

5.Ա. Անափիոսյան, Քննադատական մտածողություն ձևավորող կրթությունը որպես կանխակալ մտածողության արդյունքում ծագած, հակասությունների կարգավորման գրավական, 2012

6.Գ. Հակոբյան, Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան, Հայաստան, 2019

7.Chin, C (2007). Teacher questioning in science classrooms: what approaches stimulate productive thinking? J Res Sci Teach.

Հավելված

Դասապլան-1

Ուսուցիչ՝ Թամարա Խաչատրյան

Առարկա՝	**Գրականություն**	**Ամսաթիվ**	**29.09.2023**	**Կիսամյակ**	**1-ին**	**Դասարան**	**7-րդ**
Խմբի բացվածք՝	**Աղջիկ՝ 19 Տղա՝14**						
Թեմա՝	**«Ավելորդը**						
Օգտագործվող նյութեր՝	**մարկերներ,կպչուն թղթեր,գր.տետրեր, քարտեր,բնագիր դասագիրք_7-րդ Հեղին.՝Ա .Նիկողոսյան,Ա.Վարդանյան դաս.-2023թ.**						

Ամբողջական պատկեր՝	**Նախորդ դասից գիտեն՝ «Ավելորդը» պատմվածքը, սյուժեն, պատմվածքի գլխավոր հերոսներին, վերնագրի բացատրությունը, պատմվածքի շատ նուրբ ու հոգեբանորեն խորը կերպարներով ստեղծագործություն լինելը, որտեղ գրողը ներկայացնում է նյութականը առավել գնահատող և մարդուն՝ առավել ևս հարազատ քրոջը, չարժևորող Հաճի աղային: Այս դասին կքննարկեն Հաճի աղայի բնավորության գծերը,կարողանալու են բնութագրել Հաճի աղային որպես մարդ, ընտանիքի ղեկավար, հայր: Կարողանալու են համեմատել Հաճի աղային փախուստի պահին, հակադրելու են պատմվածքի սկզբի**

	Հաճի աղային պատմվածքի վերջնամասի Հաճի աղայի հետ:
Դասի նպատակը՝	• **Ձևավորել տեքստի հիմնական ասելիքն առանձնացնելու կարողություն:** • **Նպաստել հասկացածը սեփական խոսքով վերարտադրելուն:** • **Զարգացնել հերոսների, նրանց արարքների հոգեբանական շարժառիթները բնութագրելու հմտություն:**
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ

Աշակերտները կկարողանան.

- **Բացահայտել տեքստի գլխավոր գաղափարը,հերոսների վարքագիծը**
- **Հայտնել ինքնուրույն տեսակետ դեպքերի և հերոսների վարքագծի վերաբերյալ**
- **Վերարտադրել ստեղծագործության բովանդակությունը՝վերաբերմունք դրսևորելով հերոսների վարքագծի վերաբերյալ**

Ուսուցչի զարգացման ընթացիկ թիրախներ	**Նպատակներին հասնելու ռազմավարությունը**
Խմբային աշխատանքի ձևաչափով , հարցադրումների մեթոդի միջոցով քննադատական մտածողության զարգացում:	**Խմբային աշխատանքներ, թեմայի հետ կապված բաց հարցադրումներ /այնուհետև սուր, դիպուկ հարցեր/ ըստ**

	կարողությունների,գրավոր և բանավոր հետադարձ կապի տրամադրում:

Գնահատում **Անդրադարձ**	**Ձևավորող գնահատում ողջ դասապրոցեսի ժամանակ, գրավոր և բանավոր հետադարձ կապի տրամադրում ԳՈՒՍ աղյուսակի միջոցով**
Տնային աշխատանք	**7-րդ դաս. դասագիրք «Ամփոփիչ աշխատանք»էջ40**

Դասին անդրադարձ	**«Ավելորդը» պատմվածքը աշակերտներին ծանոթ էր , նախապես ընթերցվել էր հատված առ հատված:Պատմվածքը վերլուծվեց ամբողջովին աշակերտների օգնությամբ, քննարկումները հարցադրումների մեթոդի միջոցով կատարվում էին նրանց մասնակցությամբ: Դասապլանում ներկայացված հարցերը բաց հարցեր են, որոնք տրվեցին լավ,միջին ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներին: Դասապրոցեսին ակտիվորեն մասնակցեցին բոլորը: Բոլոր աշակերտներին տրամադրեցի բանավոր հետադարձ կապ :** **Պատմվածքի քննարկման փուլին անցում կատարելիս բաժանեցի քարտերը, բացատրեցի առաջադրանքների կատարման հաջորդական քայլերը:**

	Ուշադրության կենտրոնում պահել էի ցածր **առաջադիմություն ունեցող աշակերտներին, որոնց** **տրամադրում էի օժանդակություն, բայց փորձել եմ չվնասել** **նաև այն աշակերտներին,որոնք արագ են** **ընկալում,կարողանում են քննադատաբար վերլուծել տեքստը/նշեմ, որ դասարանում ԿԱՊԿՈՒ աշակերտ չկա/:** **Դասի վերջում ԳՈՒՍ աղյուսակի միջոցով ամփոփեցինք դասը:** **Այսօրվա դասի արդյունքները զոհացուցիչ**

Դասապլան - 2

Ուսուցիչ _ Թամարա Խաչատրյան

ԴԱՍԱՐԱՆ_ 7_րդ

/ 06.10.2023թ /

ԱՌԱՐԿԱ _

Գրականություն

ԴԱՍԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ _
45 րոպե

ԴԱՍԻ ԹԵՄԱ_
Ամփոփիչ դաս Դ.Դեմիրճյանի<<Ավելորդը>>պ.

ԴԻԴԱԿՏԻԿ ՆՅՈՒԹԵՐ ՈՒ ՊԱՐԱԳԱԲԵՐ_ Դասագիրք,բնագիր,գրականության տետր,մարկեր,թղթեր,կպչուն նյութեր,սոսինձ (գլխարկներ և պաստառներ պատրաստելու համար), ձայնասփյուռ …

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿ/ՆԵՐ/_

1.Ներկայացնել պատմվածքի հիմնական գաղափարը:

2.Զարգացնել բանավոր և գրավոր խոսքը:

3.Զարգացնել գլխավոր հերոսներին բնութագրելու կարողությունը:

4.Ձևավորել քննադատական,վերլուծական,ստեղծագործական մտածողություն:

5.Զարգացնել սեփական կարծիքը հիմնավորելու կարողունակություն:

6.Զարգացնել,որոնողական աշխատանք,մեդիագրագիտություն,ՏՀՏ միջոցներ իրականացնելու հմտություններ:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ/ՆԵՐ/_

1.Սովորողները կիմանան և կներկայացնեն պատմվածքում առկա հիմնական և հարակից գաղափարները,արծարծված թեմաները

2.Կկարողանան աշխատել տեքստի շուրջ՝օգտվելով դասագրքի <<Լուսանցքի նյութ>>բաժնից,համացանցային նյութերից:

3.Կդրսևորեն ստեղծագործակսն,քննադատական մտածողություն կերպարները վերլուծելիս և բնութագրելիս

4.Կդրսևորեն թվային,մեդիա կարողունակություն:

5.Կզարգացնեն սոցիալական տարբեր խմբերով աշխատելու հմտություն:

6.Կարտահայտեն կարծիք,սեփական դիրքորոշում պատմվածքում արծարծված խնդիրների,
գրողի բարձրացրած հարցադրումների ու գաղափարի շուրջ:

ԴԱՍԻ ԹԵՄԱՅԻ ԿԱՊԸ ԻՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ _
Պատերազմ,տեղահանություն,փախուստ,արտագաղթ,բնականոն կյանքի խաթարում…

ԽԱՉՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ _
Ավելորդ,աղա,հավասար…

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊ _
Պատմություն,աշխարհագրություն,ՀԵՊ…

ՄԵԹՈԴՆԵՐ _
Հարցադրումների,ինտերակտիվ,մտագրոհ,պրիզմա

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔ _
Մուտք /2 _3 րոպե/:
Հաճախումների և տնային հանձն. ստուգում,
մտագրոհի միջոցով իմացության ստուգում:

Խթանում /3_5 րոպե/
Լսումներ՝ <<Լուսանցքի նյութեր>>բ., ձայնասփյուռ QR մաս1,2

Ի/ընկ. /27_30 րոպե/:
Կազմավորված խմբերին բաժանել բաշխիչ նյութը `բաց և փակ հարցերով (<<Գրականություն>>_2023,հեղինակներ՝ Ա .Նիկողոսյան,Ա. Վարդանյան,էջ 40)՝ ըստ Էդվարդ դե Բոնոյի << 6 գլխարկներ >>մեթոդի,ինչպես նաև խմբի հարցը պատկերավորել (պաստառ), Հաճի աղայի ,Սրբունի ,մարդու իրավունքների պաշտպանի անունից հանդես գալ մենախոսությամբ:
1.Սպիտակ ^^^ Ներկայացնել պատմվածքի հիմնական գործողությունները՝համապատասխան մեջբերումներով:

2.Կարմիր ^^^ Ներկայացնել պատմվածքում առկա հույզերը,զգացմունքները,տրամադրությունները՝համապատասխան մեջբերումներով:

3.Դեղին ^^^ Ներկայացնել պատմվածքի դրական, ուրախ կողմերը՝ համապատասխան մեջբերումներով:

4.Սև ^^^ Ներկայացնել պատմվածքում առկա վտանգները,բացասական երևույթները՝ համապատասխան մեջբերումներով:

5.Կանաչ ^^^ Պատմվածքի համար նոր վերջաբան հորինել:

6.Կապույտ ^^^ Ներկայացնել
պատմվածքում շոշափված խնդիրները ,հարցերը,բուն գաղափարը:

Կշռադատում/արժևորում/ 5_7/.

Աշխատանքների և պատասխանների գնահատում(փոխադարձ,անհատական`ինքնագնահատում,միավորային),ակտիվ և պասիվ,ուժեղ և թույլ կողմերի բացահայտում_վերլուծություն:

ԱՆԴՐԱԴԱՐՁ /2_3/.
Պրիզմա/գլխաբառ՝ ավելորդ/:

ՏՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ /2_3/.
Արտադասարանային ընթերցանություն. պատրաստվել բեմականացման(առանձին հատվածներ),ովքեր չեն ավարտել բնագրի ընթերցումը,ավարտեն,գրականության տետրում դուրս գրեն դուր եկած հատվածներ:

ԼՍՈՒՄՆԵՐ/1 րոպե/.
Ձայնասփյուռ դ/գ QR մաս 3:

ԴԱՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ _
Քննադատական,սոցիալական,դաստիարակչական,պատմաքաղաքական…

ԿԱՊԸ ՀՊՉ_Ի ՀԵՏ _
Սոցիալական,թվային և մեդիա,լեզվագրական և մշակութային գրագիտություն և կարողունակություն…